Հ Հ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ

ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇՊՀ հիմնադրամ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

թեմա՝ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ԴԱՍՎԱՐ՝---------- ՂՈՒԿԱՍՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ ՎԱԼԵՐԻԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ ---------- ՇՈՂԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

/ Մանկ. գիտ. թեկ., դոցենտ /

Գյումրի 2023

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1.

1.1.Գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցում.....**6**

1.2. Գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցման մեթոդիկան տարրական դասարաններում.....10

Գլուխ 2.

2.1.Փորձարարական դաս.....17

2.2. Փորձարարական, հետազոտական աշխատանքի երկրորդ դասաժամին... 19

Եզրակացություն.....22

Օգտագործված գրականության ցանկ.....23

Ներածություն

Ուսուցչի մասնագիտությունը գոյություն է ունեցել դեռևս վաղնջական ժամանակներում: Հասարակությունն աճող սերենդի կրթության պատասխանատու գործը վստահել է հմուտ, բանիմաց, իմաստուն բարոյական բարձր արժանիքներ ունեցող մարդկանց Պատմամշակութային բոլոր ժամանակներում ուսուցչին է վերապահված եղել սերունդներ կրթելու վեհ պատվավոր առաքելություն: Ուսուցչի մասնագիտությանը մեծ պահանջներ են առաջադրվել քանի որ նա ճակատագրեր է կերտում Ուսուցիչը սոսկ այն մասնագետը չէ ,որի խնդիրը սովորողներին որոշակի գիտելիքներ հաղորդելն է:Ուսուցչի մասնագիտությունը կոչում է նվիրում բոլոր ժամանակներում մեծ մտածողներն ու մանկավարժները ընդգծել են ուսուցչի մասնագիտության հասարակական նշանակությունը,որը նրա անձնային և մասնագիտական որակներին առաջադրում է բարձր պահանջներ: Ուսուցչի մասնագիտության յուրահատկությունն այն է, որ նրա գործունեությունն ուղղված է մարդու ձևավորմանը,նրա իմացական դրդապատճառային ,հուզակամային ոլորտների ներդաշնակ զարգացումը ունի ճանաչողական և ստեղծագործական բնույթ: Ուստի պահանջվում է տիրապետել ոչ միայն մասնագիտական հոգեբանամանկավաժական այլև ընդհանուր մարդաբանական գիտելիքների: Ուսուցչի մասնագիտական գործունեության մեջ կարևոր են ոչ միայն մասնագիտական գիտելիքները այլ փոխազդեցության բազմազան ձևերի տիրապետումը:Ամենակարևորը սակայն սերն է ընտրած մասնագիտության և սովորողի անձի նկատմամբ»: Ուսուցչի մասնագիտական հմտությունը առանձնապես դրսևորվում է դասի ժամանակ: Այստեղ աշակերտները ոչ միայն ստանում են խոր ու կայուն գիտելիքիներ այլև դաստիարակվում եմ բարոյական ոգով փորձված ուսուցիչները ձգտում են յուրաքանչյուր դաս դարձնել բովանդակալից և հետաքրքիր: Նրանք համոզված են որ դպրոցում կարելի է հասնել երկտարեցության վերացմանը: Դասին մանրակրկիտ նախապատրաստվելու ,ուսուցման մեթոդները ստեղծագործելու, կիրառելու ուսումնական տարբեր առարկաներից վարժությունները լավ կազմակերպելու, երեխաների նկատմամբ անհատական մոտցեման միջոցով լավագույն ուսուցիչները ձգտում են դասին հմտորեն կիրառել ուսուցման բազմազան մեթոդներ, հնարներ ու միջոցներ: Ուսուցչի մանկավարժական հմտության հատկանիշներից մեկը աշակերտների մեջ ուսման նկատմամբ հետաքրքրասիրություն և հարցասիրություն դաստիարակելն է: Կարևոր է այնպես կառուցել դասը որ պարապմուքն աշակերտներին առաջ տանի մտավոր զարգացման ուղղությամբ:
<<Մարդուն տվեք ընթերցանության նկատմամբ սեր և այն բավարարելու միջոցներ ու հազիվ թե ձեզ չհաջողվի նրան դարձնել երջանիկ>>: **Ջոն Գերշել**

Կրտսեր դպրոցականի համար ուսուցումը պետք է լինի խնդրահարույց: Այն սովորողին մղելու է ինքնուրույն հետազոտական գործունեության և անհատական ստեղծագործական բնույթի որոնումների: Այդ դեպքում կրթությունը կվերածվի ոչ թե վերարտադրողական, այլ ստեղծագործական գործունեության, ինչը կարող է նպատակաուղղվել երեխաների հետաքրքրությունները, և նրանց մեջ արթնացնել գիտելիքների իմացության ծարավ:

Թեմայի արդիականությունը:

Հետազոտական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նրանով , որ այսօր տեխնիկայի զարգացման շնորհիվ շատ մեծ է կրտսեր դպրոցականների ինքնուրույնության և ստեղծագործ լինելու սոցիալական պահանջ, ինչպես նաև անհրաժեշտություն՝ օգտվելու ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների , որոնք կօժանդակեն կրտսեր դպրոցականների ինքնուրույն հետազոտական կարողությունների զարգացմանը և կհարստացնեն կրտսեր դպրոցում ինքնուրույն գործունեության փորձը :

Հետազոտական աշխատանքի նպատակն ու խնդիրները:

«Գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցման մեթոդները տարրական դպրոցում» թեմայով առաջադրված խնդրի հիմնական նպատակն է բացահայտել այն դերը, որ ունի գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցումը երեխայի լեզվամտածողության զարգացման մեջ, և առանձնացնել դրանց ուսուցման արդյունավետ մեթոդները:

Այդ նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- բացահայտել գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցման դերը երեխայի լեզվամտածողության զարգացման մեջ,
- բացահայտել գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցման մեթոդների արդյունավետությունը տարրական դասարաններում՝ հիմնվելով հաղորդակցական-գործառականմոտեցումների վրա: Արդյունավետության բացահայտման համար հիմնվել ենք նաև մեր ուսուցչական փորձի վրա:

Աշխատանքի իրականացման ընթացքում կիրառվել են **հետազոտության հետևյալ մեթոդները.**

- տեսական՝հիմնախնդրի վերաբերյալ լեզվաբանական, մանկավարժական, մեթոդական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն,
- տարրական դպրոցի մայրենիի մեթոդիկայի, դպրոցական ծրագրերի, դասագրքերի ուսումնասիրում և վերլուծություն,
- մայրենիի ուսուցման գործընթացի նպատակաուղղված դիտումներ, դասալսումներ՝ հիմնվելով դիդակտիկական արդի պահանջների վրա:

Հետազոտության մեթոդաբանական հիմք են կազմել մայրենիի ուսուցման վերաբերյալ տեսությունները՝

- լեզվաբանական (Մ.Աբեղյան, Էդ. Աղայան, Գ.Ջահուկյան, Հ.Բարսեղյան, Լ.Խաչատրյան և այլք),

- լեզվի դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ տեսությունները (Ա.Տեր-Գրիգորյան, Մ.Գ.Աստվածատրյան, Ջ.Հ.Գյուլամիրյան և այլք):

ԳԼՈՒԽ 1.

1.1.Գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցում

Որպես երեխայի մտքի անմիջական թարգմանը, խոհերի ու ապրումների արտահայտիչը՝ լեզուն և մտածողությունը օրգանապես շաղկապված են[1]: Ասենք, որ երեխայի մտավոր գործունեության մեջ ևս լեզուն և մտածողությունը երևան են գալիս սերտ կապի պայմաններում: Երեխայի խոսքի թույլ լինելու դեպքում անբավարար են նաև նրա մտավոր կարողությունները: Եվ հակառակը, որքան պարզ ու հստակ են երեխայի մտքերը, այնքան նրա խոսքը պարզ է, մատչելի ու տրամաբանված: Այս համատեքստում տարրական դասարաններում հատկապես կարևոր են դառնում գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցման միջոցով երեխայի մտածական և լեզվախոսքային հմտությունների զարգացումը, և դրանով առաջադրված խնդիրների լուծումը, որպիսիք են մտածողության զարգացումը, մասնավորապես՝ տրամաբանական, քննադատական խոսքի զարգացումը, բառապաշարի հարստացումը և այլն:

Մանկավարժը չպետք է մոռանա,որ յուրաքանչյուր երեխա անկախ տարիքից անահատականություն է և ինքը պարտավոր է ուղղորդվել նրա ուսումնառությունը՝ ըստ վերջինիս ուժերին: Կրտսեր դպրոցում երեխաներին ներքին հնարավորությունների բացահայտման նախապայման է դասի ճիշտ պլանավորումը և արդյունավետ անցկացումը, դասարանում ստեղծված հոգևոր մթնոլորտը, որի արդյունքում երեխաները ունենում են ներքին ուժերի լարում ՝ ընկալում, իմաստավորում և այլն: Տեղին է հիշատակել անտիկ շրջանի հույն փիլիսոփա Մարկոս Ֆաբրիոս Քիվինտիլիանոսի այդքան դիպուկ ասույթը՝ << Երեխան ոչ թե դատարկ սափոր է , որը պետք է լցնել, այլ ջահը, որը պետք է վառել >> Ուսումնասիրությունների արդյունքում համոզվեցին, որ կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողությունների զարգացումը նպաստում է ուսուցման արդյունվետության բարձրացման: Ճիշտ, սահուն, հասկանալով, արտահայտիչ կարդացող աշակերտները ավելի լավ են սովորում ցանկացած առարկա, քան կցկտուր կարդացողները: Վատ կարդացող, որը դեռևս կարդալ չի սովորել և չի տարբերում կարդացածի գլխավոր և երկրորդական մտքերը, չի կարողանում տեքստի շուրջ վերլուծական – համադրական աշխատանք կատարել, ըմբռնել նույթի տրամաբանությունը, հետևաբար դժավարանում է ճիշտ և հասկանալով 4 վերարտադրել: Հենց այս պաճառով աշակերտը սկսում է չսիրել՝ այդ առարկան և այդ դասավանդող

ուսուցչին։Ընթերցանության նկատմամբ հետքրքրություն աշակերտների մեջ պետք է առաջացնել դեևս առաջին դասարանից։ Բանն այն, է որ մանուկներին գրքին կապելը առավել դյուրին է քան մեծերին։ Այդ իսկ պատճառով այբբենարանն ավարտելուց հետո անգամ գրաճանչության ընթացքում պետք է փոքրիկների համար կարդալ հետաքրքիրհեքիաթներ և իրենց նույնպես դրդել՝ դրանք կարդալ, հետաքրքրություն առաջացնել կարդալու նկատմամբ։Դասվարի գլխավոր խնդիրն է։

Մարդու մտավոր գործունեության մեջ խոսքի դերն անչափ մեծ է: Մտածողության բարձրագույն ձևը՝ վերացական մտածողությունն իրականացվում է հասկացությունների, դատողությունների և մտահանգումների միջոցով: Վերջիններս հանդես են գալիս լեզվական թաղանթի հիմքի վրա: Խոսքի միջոցով հանդես եկող ընդհանրացված մտածողությունը հնարավորություն է տալիս բեռնաթափել առարկայականի, եզակիի, առանձինի հսկայական ծանրությունը և միասեռ առարկաներն անվանել մեկ ընդհանուր բառով: Դա միևնույն ժամանակ թույլ է տալիս մշտական կապ հաստատել եզակիի և ընդհանուրի միջև: Լեզուն թույլ է տալիս առանձին փաստերից, եզրակացություններից բխեցնել օրենքներ, սահմանումներ և դրանք կիրառել գործնականում[2]:

Մտածողությունը լեզվի միջոցով ոչ միայն տարրալուծում է երևույթը, մասնատում այն, բաղդատում և ենթարկում հետազոտության, այլև կատարում է հատկությունների, առանձին բաղադրիչների, միմյանց առնչվող մասերի ու փաստերի համակցում, ամբողջացում և ընդհանրացում*:*

Խոսքի միջոցով աշակերտը զգայական ճանաչողության սահմանափակ հնարավորությունից անցում է կատարում տրամաբանական մտածողությանը: Որքան վերացական խոսքը հեռանում է իր զգայական հիմքից, այնքան վերածվում է ոչ զգայական ազդարարի:

Ասենք, **հացի** վերաբերյալ մեզ տեղեկություններ են տալիս տեսողական, հոտառական, շոշափելիքի զգայարանները, մինչդեռ «<u>հաց</u>» ընդհանուր հասկացությունը վեր է այդ ամենից: Այն ընդհանրացնում է մի շարք էական հատկություններ և հենց դրանով էլ ճանաչողական ավելի մեծ դեր է կատարում: Վերացարկման շնորհիվ աշակերտները ճանաչում են նաև իրերի ու առարկաների թաքնված հատկությունները, հարաբերությունները, բացահայտում պատճառահետևանքային կապերը և այլն:

Պետք է ասել, որ չնայած երեխան ազատ խոսել սկսում է իր կյանքի երկրորդ տարում, սակայն դրանից շատ առաջ տարբերում է ձայնի տոնը՝ մեղմությունը, խստությունը, քնքշությունը, նրբությունը և հասկանում է բառերի իմաստը: Նրա արտասանած առաջին բառերը, ինչ խոսք, դեռևս չունեն կայուն, հստակ բառային իմաստ:

Բայց այդ շրջանում նրա արտասանած բառերը միաժամանակ նախադասություններ են և ունեն խոսքի նշանակություն: Շրջապատի նկատմամբ երեխայի հետաքրքրությունները գնալով ակտիվանում են: Երեխաների տրամաբանական մտածողությունը շարունակում է զարգանալ խաղի, ձեռքի աշխատանքի, խաղալիքների հետ շփման, պատմություններ ու հեքիաթներ լսելու, հեռուստատեսության և այլ միջոցներով: Հատկապես զգայարանների արագ զարգացումն ու կատարելագործումը մեծ չափով ակտիվացնում են մանկան տրամաբանությունը և վերացական ըմբռնումները: Մինչև դպրոց մտնելը, երեխաները մտածողության և լեզվի զարգացման բնագավառում բավականաչափ առաջադիմում են և նախապատրաստվում մտավոր բարդ աշխատանքի: Այս շրջանում «բանավոր խոսքի զարգացման համար բացառիկ կարևոր նշանակություն ունի բառապաշարի հարստացումը»:

Դպրոցական ուսուցումը երեխայի առջև մտավոր, հոգեկան և ֆիզիկական զարգացման նոր հնարավորություն է ստեղծում: Անցնելով լեզվի կանոնավոր ու համակարգված ուսուցման՝ աշակերտները զարգացնում են իրենց գրավոր ու բանավոր խոսքը, որը մեծապես նպաստում է նրանց տրամաբանական մտածողության զարգացմանը: Ուսուցումն սկսելով նվազագույն միավորներից՝ հնչյուններից ու տառերից, երեխաներն աստիճանաբար անցնում են գրավոր խոսքի ու ընթերցանության տեխնիկայի տիրապետմանը: Կրտսեր դպրոցականի խոսքը դեռևս հիմնականում հենվում է առարկայական ըմբռնումների վրա և հանդես է գալիս կոնկրետ իրի և առարկայի մտապատկերի հետ: Նկատվում է, որ 7-8 տարեկանից սկսած երեխաների երկրորդ ազդարարային համակարգը, այսինքն՝ խոսքը, առաջին ազդարարային համակարգի նկատմամբ սկսում է կարգավորիչ դեր կատարել, և գնալով խոսքի դերը մեծանում է: Միաժամանակ, զգայական իմացության և տրամաբանական մտածողության միջև մշակվում է ավելի սերտ կապ, համագործակցություն: Խոսքի շնորհիվ իրերն ու առարկաները համեմատաբար շուտ են ճանաչվում:

Այս համատեքստում կարևորվում է գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցումը: Դիտարկելով պատմվածքների, հեքիաթների, ոտանավորների, առակների ուսուցումը՝ համոզվել ենք, որ կրտսեր դպրոցականների զգայական իմացության ձևավորման առումով դրանք գործուն դեր են կատարում:

Տարրական դասարանների մայրենի լեզվի «Ընթերցանությունում» (2003թ.) զետեղված նյութերի մի մասը կազմում են բանաստեղծությունները կամ ոտանավորները, որոնք ըստ ժանրային առանձնահատկությունների լինում են էպիկական և քնարական տեսակի:Էպիկական ոտանավորներում պատմվում կամ նկարագրվում է որևէ դեպք, գործողություն կամ իրադաձություն: Քնարական բանաստեղծություններն ավելի շատ են և

ավելի մեծ նշանակություն ունեն գեղագիտական դաստիարակության, գրական խոսքի ուսուցման ու չափածո ստեղծագործության առանձնակատկությունների ճիշտ ընկալման համար: Որպես գեղարվեստական ստեղծագործության առանձին ժանր պատմվածքը պատկանում է էպիկական ձևին.այն իր ընդգրկմամբ և ծավալով փոքր է,իսկ հեքիաթները ժողովրդական բանահյուսության ամենահին ու ամենատարածված ստեղծագործություններից են՝ ծագած մարդկության մանկության շրջանում, և տարրական դասարաններում դրանք ամենից առաջ դասավանդվում են որպես գեղարվեստական ստեղծագործություն: Ինչ վերաբերում է առակին, ապա այն բարոյախոսական, երգիծական կամ ծաղրական բովանդակությամբ պատմողական բնույթի ոչ մեծ չափածո, իսկ երբեմն էլ արձակ գեղարվեստական ստեղծագործություն է: Այս գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցման հարցերը մենք քննելու ենք մասնավորապես դրանց՝ լեզվի և տրամաբանական, վերացական մտածողության ակտիվացման, զարգացման նպատակահարմարության առումով:

Դպրոցում լեզուն, մի կողմից, ուսուցանվում է որպես հատուկ առարկա՝ նպատակ ունենալով զարգացնել աշակերտների գրավոր ու բանավոր խոսքը, մյուս կողմից, նպաստում է այլ առարկաների ուսուցմանը: Գործնական նշանակությունից լեզուն աստիճանաբար անցնում է ավելի բարդ գործառույթի և, առհասարակ, հանդես է գալիս որպես տրամաբանության զարգացման միջոց: «Մայրենի լեզու սովորեցնելը երեք նպատակ է հետապնդում, առաջին՝ զարգացնել երեխաների այն բնածին, հոգեկան ունակությունը, որն անվանում ենք խոսելու ձիրք, երկրորդ՝ երեխաներին հասցնել մայրենի լեզվի գանձերի գիտակցական յուրացմանը և երրորդ՝ երեխաներին յուրացնել տալ այդ լեզվի տրամաբանությունը»:

Խոսքը սովորաբար ունի առանձին բաղադրիչները՝ տառ, բառ, նախադասություն: Երեխան սկզբնապես դրանք պետք է սովորի: Իր բառապաշարի հարստացմանը զուգընթաց, նա պետք է սովորի բառերի գործածությունը, հասկանա դրանց իմաստը, նշանակությունը և հմտորեն օգտվի դրանցից: Կրտսեր դպրոցականը ոչ միայն պետք է կարողանա ըմբռնել այդ ամենը, այլև իմաստավորված ձևով կիրառել խոսքի մեջ:

1.2.ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Մեր հիմնական նպատակն է գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցման առավել արդյունավետ մեթոդների առանձնացումը և դրանց արդյունավետության գնահատումը, որը հիմնված է կիրառության և ուսումնական փորձարարության վրա:

Մեթոդը հունարեն բառ է (metodod), որի բառացի թարգմանությունը նշանակում է ինչ-որ տեղ տանող ուղի, ճանապարհ: Մեթոդը բնութագրվում է որպես նպատակին հասնելու միջոց, գործիք, դասվարի և աշակերտի համագործակցություն ուսումնական միջավայրում՝ միտված ուսումնական նպատակների իրականացմանը: Ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է տարբեր մեթոդների իմացություն: Սակայն սոսկ իմացությունը բավարար չէ արդյունավետ ուսուցում իրականացնելու համար: Չափազանց կարևոր է ուսուցման նպատակներից ու կանխատեսված արդյունքներից բխող մեթոդների ճիշտ ընտրության և կիրառության կարողությունը:

Ուսուցիչի մասնագիտական կարողությունների կարևոր մասն են կազմում բազմազան մեթոդների իմացությունը, դրանք կիրառելու, համադրելու հմտությունը: Ուսուցման մեթոդներն այսօր երկու պայմանական խմբի են բաժանվում՝ ավանդական և նոր կամ ժամանակակից մեթոդներ:

Ավանդական են համարվում բացատրական, զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության (գիտելիքի) պարզ փոխանցումը աշակերտին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը:

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է աշակերտի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռք բերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել **ինտերակտիվ կամ փոխներգործուն**:

Մեթոդների ընտրությունը և կիրառությունը ինքնանպատակ լինել չի կարող: Այն կապված է բազմաթիվ նպատակների և խնդիրների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ ծրագրված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով: Ուսուցման գործընթացի կազմակերպումը պետք է իր մեջ ներառի ուսուցման բազմազան մեթոդներ: Դրանց մի մասը հաջողությամբ հանձնել են ժամանակի քննությունը, ավանդաբար կիրառվելու կիրառվելու են: Սակայն հասարակության

զարգացման ներկա փուլում կրթության առջև դրված նոր խնդիրներն ու հեռանկարային զարգացումները պահանջում են ուսուցման գործընթացում նոր մեթոդների կիրառման անհրաժեշտություն:

Տարրական դասարաններում մայրենիի ուսուցման մեթոդներն ընտրվում են՝ հաշվի առնելով սովորողների տարիքային, հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ մայրենիի տարրական դասընթացի ուսումնասիրությունն իրականացվում է երկու փուլով՝ լեզվական նախագիտելիքների և լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրում:

Հարցն այն է, որ լեզվական գիտելիքների յուրացումը սովորողներից պահանջում է մտածողության այնպիսի մակարդակ, որ նրանց կարողանա տալ լեզվական երևույթները համեմատելու, հակադրելու, դրանց ընդհանրություններն ու տարբերությունները նկատելու, դասակարգելու կարողություններ:

Միայն մտածողության այս բաղադրիչների զարգացածության որոշակի մակարդակ ունեցող աշակերտները կարող են ըմբռնել և իմաստավորել լեզվական երևույթները, առավել ևս, հասկանալով, մտահանգումներ ձևակերպել (սահմանումներով և կանոններով ամփոփել ձեռք բերած գիտելիքները): Պատահական չէ, որ որպես գրաճանաչության ժամանակակից մեթոդ, ընտրված է վերլուծական-համադրական մեթոդը, որը սովորողների տառաճանաչության և կարդալ-գրել սովորեցնելու գործընթացների ժամանակ դառնում է մտածողության գերակա տեսակ, զարգանում է աստիճանաբար ու դառնում լեզվական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման արդյունավետ ուղի:

Գեղարվեստական ստեղծագործությունների մասին նախնական գիտելիքներ սովորողները ձեռք են բերում դեռևս գրաճանաչության նախաայբբենական շրջանում, իսկ հաջորդ դասարաններում արդեն զարգանում են նրանց ինքնուրույնությունը, մտածողությունը, ամրապնդվում ճանաչողական և մտածողական կարողությունները: Տարրական դասարաններում սովորողները նախնական պատկերացում են ձեռք բերում նաև լեզվական որոշ գիտելիքների մասին՝ առանց դրանք անվանելու, ինչին նպաստում է տարաբնույթ մեթոդական հնարներով կազմված վարժությունների համակարգը [3] : Անշուշտ, այդ գործընթացն ուղղորդվում է լեզվական որոշ հասկացությունների մատչելի մեկնաբանություններով:

Դեռևս առաջին դասարանում գրաճանաչության նախաայբբենական շրջանում սովորողները գեղարվեստական ստեղծագործություններիվերաբերյալ որոշակի գիտելիքներ են ձեռք բերում՝ տարբերակելով օրինակ՝ հեքիաթը ոտանավորից, առանձնացնելով դրանք և բնութագրելով: Այս իրողությունները նպաստում են

գեղարվեստական ստեղծագործություններիշուրջ հետագա տեղեկույթի յուրացմանը: Գրաճանաչության շրջանի երրորդ փուլում գործածվում են նաև գեղարվեստական ստեղծագործություններիայլ անվանումները՝ պատմվածք, հանելուկ, շուտասելուկ և այլն: Այդ ստեղծագործությունները կարդալ սովորեցնելու ընթացքում ուսուցիչը բաժանում է իբրև առանձին գործեր և դրանց շուրջ աշխատելիս հենվում է աշակերտների ճանաչողական ընդունակությունների վրա. աշակերտները թեև **գեղարվեստական ստեղծագործություններ** եզրույթը չեն գործածում, այնուամենայնիվ նշում են դրանց առանձնահատկությունները և տարբերությունները: Գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցումը ավելի արդյունավետ է դառնում հատկապես ժամանակակից մեթոդների շնորհիվ, որոնց հիմքում ընկած են աշակերտի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքների ձեռքբերման գործում նրա ակտիվ մասնակցությունը՝ հիմքում ունենալով աշակերտակենտրոն ուսուցման մոդելը:

Այստեղ անհրաժեշտ է անդրադառնալ ուսուցման ժամանակակից մեթոդներին, որոնց բոլոր տեսակները կատարում են երկու կարևոր գործառույթ.

- նպաստում են գիտելիքների ամրապնդմանը և խորացմանը,
- խթանում են նոր գիտելիքների արդյունավետ յուրացումը:

Այսօր բազմաթիվ հիմնական մեթոդական նորարարություններ կապվում են ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման հետ: Տերմինը կարելի է պարզաբանել հետևյալ կերպ. անգլերենում inter-փոխադարձ, act- գործողություն: Ինտերակտիվ նշանակում է փոխանցել կամ զրույցի, երկխոսության մեջ գտնվել ինչ-որ մեկի հետ: Ինտերակտիվ ուսուցումը առաջին հերթին ուսուցում է երկխոսության միջոցով: Այն ուսուցողական տեխնոլոգիա է՝ հիմնված խմբի անդամների փոխազդեցության և ուսումնառության խնդիրների լուծման, սովորողի ազատության վրա:

Փոխներգործուն մեթոդները նպաստում են ստեղծագործական, քննադատական մտածողության զարգացմանը, անհատական և խմբային աշխատանք կատարելու կարողությունների ձևավորմանը: Աշակերտները մեկ-երկու դասաժամի ընթացքում տարբեր մեթոդական հնարների միջոցով հեշտությամբ կարողանում են ըմբռնել լեզվական նյութը:

Ակտիվ ուսուցման ընթացքում փոխգործուն մեթոդների կիրառումը նպաստում է երեխաների ազատ և ինքնուրույն մտածելու, սեփական կարծիք հայտնելու, պատասխանատու որոշումներ կայացնելու, ընտրություն կատարելու հմտությունների զարգացմանը, ճանաչողական գործընթացում ինքնուրույն կողմնորոշմանը: Այդ մեթոդները զույգերով, խմբով մտավոր աշխատանքի եղանակներն են՝ ուղղված համատեղ որոնումների և մտորումների քննարկմանը, ընդհանուր որոշումների կայացմանն ու

իրագործմանը: Ուսուցման փոխգործուն մեթոդները համապատասխանում են երեխայակենտրոն ուսուցման սկզբունքներին և արդյունավետ են:

Փոխգործուն մեթոդները բացառում են որևէ մեթոդի առաջնայնությունը, գերակայությունը, ինչպես նաև մեկ մեթոդի գերակշռությունը մյուսների նկատմամբ:

Փոխգործուն ուսուցման սկզբունքներն են.

- փոխազդեցությունը, փոխուսուցումը
- երեխայի ակտիվությունը
- համագործակցությունը
- ինքնաարտահայտման խրախուսումը
- հետադարձ կապը:

Փոխգործուն մեթոդների առանձնահատկություններն են՝

- երեխայի իմացական գործընթացների կազմակերպումը
- հետաքրքրությունների բացահայտումը
- համագործակցային կարողությունների զարգացումը
- անհատական առանձնահատկությունների բացահայտումը
- հաղորդակցական ունակությունների ձևավորումը
- տրամաբանական մտածողության զարգացումը
- ինքնուրույնության խրախուսումը
- վերլուծական կարողությունների ձևավորումը և այլն:

Փոխգործուն մեթոդների արդյունավետ կիրառման ընդհանուր բանաձևեր չկան: Ցանկացած դաս եզակի է և անկրկնելի: Ուսուցչի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել կոնկրետ իրավիճակին, իր ունեցած մեթոդական զինանոցից ընտրել համապատասխան մեթոդը՝ ելնելով իրականացվող աշխատանքի նպատակներից[4]:

Ուսուցիչն առաջնահերթ հրաժարվում է դասարանում միանձնյա ղեկավարի իր դերից: Դասավանդման և ուսումնառության իմ մանկավարժական փորձը վկայում է, որ համագործակցված ուսուցումը լավագույն միջոց է դրական արդյունքների ակնկալման և ապահովման համար:Խմբերով աշխատանքը ինքնանպատակ չէ: Այն միջոց է համագործակցային ուսուցման հասնելու ճանապարհին: Կրթության հայտնի տեսաբաններ Ժան Պիաժեն, Լև Վիգոտսկին և ուրիշներ, պնդում են, որ երեխայի մտավոր զարգացման գործում սոցիալական փոխազդեցությունն ու միջանձնային հաղորդակցությունը կարևոր գործոններ են: Ուսուցչի համար շատ կարևոր է հասկանալ, որ ոչ միշտ են փոքր խմբերը համագործակցային: Համագործակցության աստիճանից կախված՝ դասապրոցեսում հնարավոր են փոքր խմբերով աշխատանքի տարբեր մակարդակներ՝

1.Կեղծ խմբեր: Թեև աշակերտները աշխատում են խմբերով, բայց առանձնակի շահագրգռվածություն չեն դրսևորում:

2.Ավանդական խմբեր: Աշակերտները բաժանված են խմբերի, բայց առաջադրանքը տրված է այնպես, որ համատեղ աշխատանքի կարիք չի զգացվում:

3.Համագործակցային խմբեր: Աշակերտները հասկանում են, որ իրենց հաջողությունը կախված է խմբի բոլոր անդամների ներդրումից: Նման խմբերին բնորոշ է թիմային աշխատանքի ոգին, ընդհանուր նպատակին հասնելու համար առավելագույնը անելու ցանկությունը, փոխկախվածությունն ու փոխկապվածությունը, սոցիալական փոխազդեցության հմտությունները, խմբի աշխատանքի ընթացքը և արդյունքը մշտապես գնահատելու ու վերանայելու կարողությունը:

Ուսուցիչները պետք է նկատի ունենան այն հանգամանքը, որ փոքր խմբերով աշխատանքներ կիրառելու սկզբնական փուլում համագործակցային ուսուցման հավանականությունը նվազ է: Բայց պետք է հետևողականորեն ձգտել համագործակցային ուսուցման մթնոլորտի ստեղծմանը, որպեսզի արդարացված ու արդյունավետ լինի փոքր խմբերով աշխատանքը:

Ուսուցման մասին խոսելիս անկախ այն հանգամանքից, թե ինչ ծրագրերից բխող մեթոդներ են կիրառվում դասավանդման և ուսումնառության ընթացքում, մասնագիտական գրականության մեջ որոշ ուսումնասիրողներ այն կարծիքին են, որ յուրաքանչյուր մանկավարժ, անհրաժեշտությունից ելնելով, պետք է կարողանա բավարար պատասխաններ տալ հետևյալ հարցերին.

1. Ի՞նչ է ուսուցանվում.
2. Ու՞մ է ուսուցանվում.
3 .Ինչպիսի՞ միջավայրում է ուսուցանվում.
4. Ինչպե՞ս է ուսուցանվում.

Ուսուցանել նշանակում է ներգործել աշակերտի գիտելիքների, հմտությունների, արժեքային համակարգի վրա, որոնք ձևավորվում են՝ որպես ուսուցչի գործունեության հետևանք[5]: Դպրոցական գործունեությունը, փոփոխվող իրավիճակներին ժամանակին արձագանքելու կարողությունը, դպրոցի աշակերտների նվիրվածությունը և աշխատանքից բավարարվածությունը նույնպես ազդում են ուսումնառության վրա: Այս հասկացությունը մի այլ տեսանկյունից սահմանվում է՝ որպես **ուսուցման/ուսումնառության արդյունավետություն**:

Ելնելով ուսուցման առանձնահատկություններից՝ գործունեության ողջ համակարգը պետք է ընդգրկի հետևյալը՝ միջավայրը, մարդկանց, կառուցվածքը, հարաբերությունները, գաղափարախոսությունը, նպատակները, ուսուցման բովանդակությունը, հարմարվելու ունակությունը և կամքը:

Համագործակցային աշխատանքն ունի մի շարք առավելություններ, որոնք կարող են հետաքրքրություն ներկայացնել:

Տարրական դասարաններում դասավանդման ժամանակակից մեթոդների առանցքը պետք է կազմի թեմատիկ ուսուցումը, որը բաղկացած է երեք տարրերից.

- Ուսուցչի պլանավորում
- Փոքր դասեր
- Համագործակցային ուսումնառություն

Թեմատիկ ուսուցման գործընթացում ամենամեծ դերակատարն ուսուցիչն է, ով իր օրացուցային պլանում պարտադիր կարգով պետք է առաջ քաշի մի շարք կարևոր խնդիրներ, որոնց թվին են դասվում՝

ա) երեխաներին ուսուցանելու համար ուսուցչի կոնկրետ նպատակները.

բ) յուրաքանչյուր երեխայից սպասելիքներ

գ) նրանց մոտ ձևավորվող հմտություններ:

Ուսուցանել կարելի է ասելով և մեկնաբանելով, ցույց տալով և ցուցադրելով, սովորողի ջանքերն ուղղորդելով և ուղղություն տալով կամ էլ այս բոլոր գործողությունները համադրելով: Սա էլ հենց թելադրում է, թե ուսումնառությունը խրախուսելու համար ինչպե՞ս դասավանդել կամ ի՞նչ ռազմավարություն կիրառել:

Տարրական դպրոցում գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցման նպատակներն են զարգացնել աշակերտների մտածողությունը, աշխարհընկալումը և ձևավորել ինքնուրույն խոսք կառուցելու հիմքերը՝ մշտապես հարստացնելով աշակերտների գործուն բառապաշարը, ինչպես նաև բանավոր և գրավոր խոսքում տեքստի բովանդակությունից կախված տարբերելով բառերի նշանակությունները, բացահայտել-ցուցադրել և բացատրել տեքստերի տարբերությունները:Սա կարելի է անել նաև ստեղծագործական աշխատանքի միջոցով՝ ինքնուրույն կազմել հանելուկներ, հորինել հեքիաթներ, գրել պատմվածք: Այս պարագայում առավել կիրառելի մեթոդներ կարող են լինել ԽԻԿ համակարգով՝ մտագրոհ, խմբային աշխատանք, Պրիզմա, Վեննի դիագրամ, ԳՈՒՍ աղյուսակ, Տ-աձև աղյուսակ և այլն:

Այս առնչությամբ, օրինակ դիմել ենք հետևյալ առաջադրանքին՝

Հանելուկներ գուշակել՝ Ծնվում են ջրից, Ճերմակ թև առնում, Քո շնչից անգամ Նորից ջուր դառնում (<u>փաթիլներ</u>): Ճերմակ է, շաքար չէ, Կարծր է, բայց քար չէ: Հենց տաքացավ, կհալչի (<u>սառույց</u>):Ես սպիտակ թիթեռ եմ, Ամեն տեղ էլ կթռչեմ, Ձմռան դաշտում, անտառում Ճերմակ վերմակ կփռեմ (<u>ձյուն</u>): Այս դեպքում նպատակ ենք ունեցել զարգացնել երեխաների մտածողությունը և երևակայությունը, իրերը, երևույթները տարբեր կողմերից ճանաչելու ունակությունները:

Թեմատիկ ուսուցման հաջորդ փուլի՝ փոքր դասի նպատակն է աշակերտների փոքր, երբեմն նաև մեծ խմբերով մասնակցությունը որոշակի պատասխանատու աշխատանքների կատարմանը, որը նպաստում է նրանց ինքնուրույնության զարգացմանը, և մեծացնում աշակերտի պատասխանատվության զգացումը: Օրինակ՝ որևէ պատմվածքի

նախապատրաստման նպատակով դասարանը բաժանվում է մի քանի խմբերի, նախապես բաշխվում են դերերը, որոշվում է զրույցի թեման և այլն:

Թեմատիկ ուսուցման երրորդ տարրը՝ համագործակցային ուսումնառությունը, մի եղանակ է, երբ աշակերտները համատեղ ընդհանուր նպատակին հասնելու համար աշխատում են փոքրիկ խմբերով: Նպատակը կարող է ուղղակիորեն առնչվել իրենց ուսումնասիրած թեմայի հետ: Ուսուցման մեթոդոլոգիական-մանկավարժական առանձնահատկություններց մեկը աշակերտի բանավոր խոսքի կազմակերպումն ու մշակումն է, որոնցից յուրաքանչյուրն անհրաժեշտաբար պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.

- Թույլ տալ ինքնուրույն մտածել
- Սովորեցնել գործածել համապատասխան բառապաշար
- Սովորեցնել կառավարել սեփական ձայներանգն ու ծավալը
- Հնարավորություն տալ խոսել հերթով և հանգիստ
- Հարցադրումներից հետո սպասել պատասխանի:

Համագործակցային ուսումնառությունը հնարավոր է եղել ապահովել հետևյալ եղանակով՝

Խաղը(որպես ակտիվ ուսուցման կազմակերպման ձև)՝ «Բերքահավաք»: Ուսուցչի կողմից գրատախտակին ծառ է ամրացվել: Ծառի վրա կախվել են մրգեր, որոնց վրա բառեր են գրված: Դասարանը բաժանվել է խմբերի, և յուրաքանչյուր խմբից մեկ աշակերտ մոտեցել է ծառին ու հավաքել համապատասխան բառը: Աշակերտների յուրաքանչյուր խմբին հանձնարարվել է հանելուկներ հորինել գրված բառերի համար: «Բերքահավաքից» հետո յուրաքանչյուրն իր զամբյուղից հանել է բառերը և ներկայացրել խմբի հորինած հանելուկը: Այս մեթոդի կիրառումը զարգացնում է տրամաբանական մտածողությունը, երեխաները կարողանում են ինքնուրույն արտահայտվել, տրամաբանել երևույթների մասին:

ԳԼՈՒԽ 2.

2.1.Փորձարարական դաս

Ուսումնասիրությունը կիրառելու նպատակով, 4-րդ դասրանում իրականացվեց երկու փորձարարական դաս մայրենի առարկայից, հետևյալ թեմաներով՝ **«Այրի կինն ու որդին»** և **«Արջն ու օձը»** առակները . Մայրենի 4-րդ դասագիրք, հեղ.՝ Վաչագան Սարգսյան:

Սույն թեմաններում առկա խնդրահարուց իրավիճակները հնարավորություն ընձեռեցին դասապրոցեսին ստեղծել բանավեճի մթնոլորտ, հանդես գալ սեփական տեսակետներով, քննարկել դրանք տարբեր անկյուններից և, ունենալով քննարկման ենթարկված բազմակարծություն, առաջադրել որոշակի լուծումներ և գալ եզրահանգման՝ զարգացնելով քննադատական մտածողությունը:
Փորձարարական դասաժամին ներկա էին դասարանի բոլոր աշակերտները՝ թվով 28: Աշակերտներն ունեին առաջադիմության և զարգացվածության տարբեր մակարդակներ: Առաջին հետազոտական դասը իրականացվեց << **Այրի կինն ու որդին**>> բնագրի ուսումնասիրության շուրջ:
Համաձայն դասապլանի առաջադրվեց հարց՝ . **ի՞նչ է ազնվությունը, .ի՞նչ է խարդախությունը և արդյո՞ք հնարավոր է, անկախ հանգամանքներից, միշտ ազնիվ լինել:** Առաջադրված հարցերի քննարկմանը նախ մասնակցեցին աշակերտներից 4-ը՝ տալով հետևյալ պատասխանները.
1. Ազնվությունը մարդկային դրական գիծ է, որը դաստիարակում են մեր ծնողները.
2.Ազնվությունը լավ հատկանիշ է, բայց ոչ միշտ է հնարավոր ազնիվ լինել.
3. Ազնիվ է այն մարդը, ով չի ստում անկախ հանգամանքներց.
4-րդ աշակերտը հարցին տվեց շատ անսպասելի պատասխան ասելով՝ ազնիվ ու արդար մարդիկ մեր օրերում տեղ չունեն, փոխարենը հաճախ խարդախներն են հասնում հաջողությունների:
Վերջին հնչեցրած պատասխանը դարձավ բանավեճի քննարկման բուռն առիթ: Բանավեճին աստիճանաբար միացան ևս երեք աշակերտ՝ արտահայտեցին իրենց տեսակետները՝ հիմնավորելով օրինակներով:

Ստեղծված իրավիճակում, երբ առկա էր առողջ քննադատական մթնոլորտ, առաջարկեցի բաժանվել խմբերի և լուռ ընթերցել << **Այրի կինն ու որդին**>> առակը, հետևյալ տողերից առակի համար ընտրել առավել համապատասխանը՝ հիմնավորելով ընտրությունն ու բերել դրան համարժեք վկայություններ ու փաստեր:

1. Աշխատասիրության գովերգում, քանի որ...
2. Բարության գովերգում, քանի որ...
3. Խարդախության քննադատում, քանի որ...

Առակը ընթերցելուց հետո իրենց տեսակետները արտահայտելու պատրաստակամություն հայտնեցին ինչպես դասի սկզբնական փուլում ակտիվություն դրսևորած աշակերտները, այնպես էլ նոր՝ թվով 7 աշակերտ: Վերջիններից մեկը, ով ընտրել էր աշխատասիրության գովերգումը տողը, հիմնավորեց իր ընտրությունը՝ պնդելով որ այրի կինը այծ էր պահում և կթում, իսկ որդին ամեն օր արածացնում էր այծերին, պատահարն էլ ներկայցրեց որպես բնության աղետ:
Այս տեսակետը արժանացավ առողջ քննադատության և բանավեճի: Մասնակից մեկ այլ աշակերտ նշեց, որ իր համար ընդունել է բարության գովերգումը, քանի որ այրի կինը հարևաններին կաթ էր տալիս: Առաջադրված տեսակետին համակարծիք եղան նոր թվով 4 աշակերտներ: Այս տեսակետի հիմքերը թույլ համարեցին մինչ այդ լուռ հետևող թվով 3 աշակերտ աշակերտներ՝ արտահայտելով նոր կարծիքներ և քննադատորեն մոտենալով առակի հերոսի քայլին: Նրանք ընտրեցին առաջադրված տարբերակներից երրորդը՝ խարդախության քննադատումը, քանի որ թվացյալ բարություն ցուցաբերող կինը ջուր էր խառնում կաթին: Խմբերի միջև ծավալվեց անկաշկանդ բանավեճ, որն էլ իր հերթին նպաստում էր քննադատական մտածողության զարգացմանը:
Բանավեճ մեթոդի կիրառումը առավել ակնառու դարձնելու նպատակով առաջարկեցի ևս մեկ անգամ, արդեն բարձրաձայն, միմյանց շարունակելով կարդալ բնագիրը՝ ուշադրություն դարձնելով գրատախտակին գրված հարցադրումներին:
Հարցեր՝

1. Ինչպես կմեկնաբանես այրի կնոջ բացատրությունը որդուն:
2. Ինչու որդին շուտ տուն եկավ և ինչ պարզաբանում տվեց մորը:
3. Ինչ կցանականաս ասել այրի կնոջը, եթե հանդիպես:
4. Քո կարծիքով արդյոք մի շերեփ ջուրն էր հեղեղ դարձել, թե...

Բանավեճին մասնակից դարձան դասարանի ևս 3 աշակերտ գրեթե բոլոր աշակերտները, բացառությամբ չորսի: Նրանց մոտ Դրսևորվեց առավել պասիվություն, կար կաշկանդվածություն: Վերլուծելու կարողությունները թույլ էին: Աշակերտները ազատ արտահայտում էին իրենց տեսակետները, ցանկացած կարծիք ընդունելի էր, վիճելի պատասխանները հիմնավորվում էին և հնչեցվում հակափաստարկներ:
Դասի ավարտին՝ կշռադատման փուլում իմ կողմից խմբերին ներկայացրեցի հանձնարարություն. տրված բառերի համապատասխան դասավորությամբ ստանալ առածներ՝ մեկնաբանելով վերջիններիս միտքը:

1. Ազնիվ մարդու հացը չի կտրվի:
2. Անազնիվ վաստակը հեղեղը կտանի:

Ներկայացված աշխատանքին մասնակցեցին նախորդ չորսից ևս 2-ը: Արդյունքում ունեցա աշակերտների հետևյալ մասնակցության պատկերը:

Սկիզբ	Խմբային	Ընթացք	Պասիվ
16%	35%	29%	20%

2.2.Փորձարարական, հետազոտական աշխատանքի երկրորդ դասաժամին

<Բանավեճ> մեթոդով քննադատական միտքը զարգացնելու նպատակով ընտրեցի **<<Առյուծն ու մուկը>>** առակը: Դասի միջանկյալ հատվածում՝ իմաստի ընկալման փուլում բանավեճի առիթ հանդիսացան նախապես բաժանված խմբերին հղված հարցադրումները:

Արդյո՞ք մեղավոր էր օձը:

1.Չէ՞ որ բնությամբ է նրան տրված սողքը:
2. Կարո՞ղ ենք ասել, որ արջը ընկերություն անել չգիտեր:
3. Ի՞նչ եք կարծում ովքեր կարող են ընկերություն անել:
4. Արդյո՞ք ընկերություն անելու համար պետք է նման բնավորություններ ունենալ:
5. Ինչու՞ չստացվեց արջի և օձի ընկերությունը:

Այս հարցադրումները հիմք հանդիսացան խմբերի միջև ծավալված բանավեճի: Ի տարբերություն նախորդ փորձարարական դասի՝ այս անգամ բանավեճի սկզբնական փուլում մասնակցեցին թվով 9 աշակերտ, որոնցից երեքը մի խմբից էին, իսկ չորսը մյուս: Երկրորդ հարցի շուրջ բանավիճեցին ևս 3 աշակերտ: Մյուսները ակտիվ հետևորդներ էին և հաճախ հուշումներ էին անում ընկերներին: Հնչում էին ստեղծագործաբար արտահայտված մտքեր, աշակերտները կատարում էին հետաքրքիր վերլուծություններ: Արդյո՞ք ընկերություն անելու համար պետք է նման բնավորություններ ունենալ հարցի քննարկմանը ավելացավ աշակերտների թիվը, որոնք անկաշկանդ ներկայացնում էին իրենց տեսակետները, անում առողջ դատողություններ:

Նման կարծիքներից էր՝ <Ոչ. կարծում եմ ընկերները կարող են ման բնավորոթյոններ նաև չունենալ, քանի որ դա կարող է ձանձրալի լինել, ընկերներից մեկը պարտադիր պետք է ակտիվ լինի>>:

Կար նաև հետևյալ կարծիքը՝ <<Եթե ընտրում ես ընկեր, նա պետք է քեզ նման լինի, որպեսզի տարաձայնություններ չլինեն: Այդպես ավելի հեշտ է , և դրա վառ ապացույցն էլ մեր դասն է>>:

Դասի կշռադատման փուլում Բանավեճ մեթոդի կիռաման համար հիմք ծառայեցին հետևյալ հարցերը

- Երբ ցանկանաս կարող ես հրաժարվել ընկերոջից:
- Ում հետ ուզես, կարող ես ընկերանալ:

Բանավեճի այս փուլում նախորդ մասնակից աշակերտների թիվը ավելացավ ևս 6- ով: Աշակերտները դեմ և կողմ կարծիքներ էին հնչեցնում, հիմնավորում փաստերով և անգամ սեփական օրինակների միջոցով:

1.Ընկերոջից հրաժարվելու համար պետք է լինի լուրջ և հիմնավոր պատճառ:
2.Ընկերությունը սրբություն է, ոչ մի դեպքում ընկերոջից հրաժարվել չի կարելի:
3.Որպեսզի անակնկալի չգանք, պետք է իմանալ թե ում ես ընկեր ընտրում;
4.Ում հետ ուզես չես կարող ընկերանալ, ընկերը պետք է սրտակից մեկը լինի, ունենա մարդկային լավ հատկանիշեր:
5.Եթե անգամ ընկերը սխալ քայլ է արել, պետք էնրան օգնել, թույլ չտալ ավելի խորացնել սխալները:

Մարդիկ բնավորությամբ տարբեր են լինում, ուսի ամեն մեկին մեզ ընկեր ընտրել չենք կարող: Այս հնչած պատասխանների ժամանակ էլ ավելացան մասնակից աշակերտների թիվը, ովքեր ներկայացրեցին իրենց համոզմունքները:
Նրանց թիվը կազմեց +5 աշակերտ:
Համեմատաբար լուռ էին նախորդ փորձարարական դասի պասիվ աշակերտները, որոնք խուսափում էին իրենց դիրքորոշումն ու ազատ կարծիքը արտահայտելուց: Նրանց թիվը 3 էր: Գնահատականները հիմնավորվեցին:
Այսպիսով 2-րդ հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա, ստացվեց հետևյալ գծապատկերը:

Սկիզբ	Խմբային	Ընթացք	Պասիվ
18%	38%	39%	5%

Փորձարարական ,և առաջին, և երկրորդ դասից գնահատվեցին 5-6 աշակերտ:
Արդյունքում պահպանվեցին Բանավեճի ընթացքում սկզբունքային մոտեցումները
1. Բոլոր մասնակիցները հավասար էին
2. Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունեցավ իր կարծիքը ներկայացնել ցանկացած հարցի վերաբերյալ
3. Աշխատանքի մեջ ներգրավվեցին բոլորը
4. Ոչ մի ուսանող չի քննադատվում
5. Խրախուսվեցին այն աշակերտները, որոնք ազատ և անկաշկանդ էին մտածում:
Փորձարարական և առաջին և երկրորդ դասից գնահատվեցին 5-6 աշակերտ:
Գնահատականները հիմնավորվեցին:
Տարրական դասարաններում գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցման ընթացքում նոր մեթոդների արմատավորումը զուգակցելով ուսուցիչների տարիների փորձի հետ արմատավորված ավանդական մեթոդների հետ՝ անկասկած իրենց դրական արդյունքները կտան երեխաների կրթության և դաստիարակության հարցում: Գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցման արդյունավետության բարձրացման պայմաններից մեկը ուսուցչի կողմից բազմազան մեթոդների կիրառումն է, դրանց ներդաշնակ համադրումն ու տրամաբանական անցումները մեկից մյուսին: Այս իմաստով արդյունավետ են պարզ, կազմակերպական մեծ նախապատրաստություն, միջոցներ և նյութեր չպահանջող մեթոդական հնարները: Սրանք ինքնուրույն կամ անկախ կիրառություն ունեն, սակայն ավարտուն, վերջնական արդյունքներ ստանալու նպատակով հաճախ ներառվում են ավելի ամբողջական մեթոդների կազմում:
Վերջին մի քանի տասնամյակներում տարրական դասարաններում լեզվական գիտելիքներն ուսուցանվում և վերածվում են կարողությունների տարբեր մեթոդների համակցումով' որպես լեզվական հենք օգտագործելով մայրենիի դասագրքերում զետեղված գեղարվեստական ստեղծագործությունների ընձեռած լեզվական հնարավորությունները:
Գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցման ընթացքում նոր մեթոդները, մեթոդական նոր հնարները կիրառելիս անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել մայրենիի դասավանդման արդյունավետության ապահովման ուղիներին, ուսուցման բազմազան միջոցների, մեթոդների և ձևերի օգտագործման նպատակահարմարությանն ու աշակերտների ուսումնական ակտիվ գործունեության կազմակերպմանը՝ նրանց անհատական հնարավորությունների, նախասիրությունների հաշվառմամբ: Միայն այս

պարագայում ուսուցիչը կարող է համոզվածություն ունենալ, որ աշակերտները կարող են դրսևորել բանավոր և գրավոր խոսք կազմելու որոշակի հմտություններ, որոնք հիմնված կլինեն նրա իմացական կարողությունների ու տրամաբանական մտածողության զարգացման վրա:

Եզրակացություն

Մեր աշխատանքի արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու հետևյալ եզրակացությունները, որոնք բխում են առաջադիր նպատակից և խնդիրներից.

1. Կրտսեր դպրոցականների տրամաբանականմտածողության,գրավոր և բանավոր խոսքի զարգացման,բառապաշարի հարստացմանհամար առավել նպատակահարմար է գեղարվեստականստեղծագործությունների ուսուցումը իրականացնել **ինտերակտիվ կամ փոխներգործուն** մեթոդներով: Ինտերակտիվ մեթոդը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև զարգացնում է քննադատական մտածողությունը, գիտելիքները դարձնում է կիրառելի և նպաստում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու հարստացմանը:

1. Տարրական դասարանների աշակերտների մոտ կապակցված խոսք կառուցելու կարողության ձևավորումը խիստ բազմաբնույթ ու համակողմանի աշխատանք է, որն իր մեջ ընդգրկում է լեզվի ուսուցման գրեթե բոլոր բնագավառները:

2. Գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցման միջոցով աշակերտը զգայական ճանաչողության սահմանափակ հնարավորությունից անցում է կատարում տրամաբանական մտածողությանը: Որքան վերացական խոսքը հեռանում է իր զգայական հիմքից, այնքան վերածվում է ոչ զգայական ազդարարի:

3. Պարզ հասկացությունների ուսուցումից աստիճանաբար անցնելով բարդ հասկացություններին և դրանք դիտելով իրենց միասնական կապի մեջ՝ առաջնությունը տալիամեմատություններին: Այդ տարիքում համեմատությունն ուսուցման ամենաարդյունավետ միջոցներից է:

4. Գեղարվեստականստեղծագործություններիուսուցումը կարևոր է մասնավորապես բառապաշարի հարստացման, խոսքի զարգացման իմաստով: Այս ուղղությամբ աշխատանք պիտի կատարել մասնավորապես Մայրենի-2, Մայրենի-3, Մայրենի-4 դասագրքերի գեղարվեստականգործերի շուրջ տարվող աշխատանքների ժամանակ, երբ երեխաները վերլուծում են ընթերցած ստեղծագործությունը, դիտարկում հերոսների արարքները:

5. Գեղարվեստականստեղծագործություններիուսումնասիրումը ձևավորվում է և ապահովում է անկաշկանդ հաղորդակցվելու, սեփական հույզերն արտահայտելու կարողություն, միջանձնային հարաբերություն ստեղծելու հնարավորություններ: Սրանց ուսուցմամբ բացահայտվում է լեզվական համակարգի վերացարկվածության աստիճանը:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավագյան Վ., Անտոնյան Ն., Խաչատրյան Ռ., Մայրենի-3, «Լույս» հրատարակչություն, Երևան, 2015:
2. Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1986:
3. Ասատրյան Լ., Հակոբյան Գ., Մանկավարժության հետազոտությունների մեթոդաբանություն, Երևան, Արտագես, 2011:
4. Աստվածատուրյան Մ., Վարդումյան Ս. և ուրիշներ, ինտեգրված թեմատիկ միավորներ, Ձեռնարկ տարրական դպրոցի ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման համար, ԱՅՌԵՔՍ, Երևան, 2003:
5. Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը ուսուցման վաղ շրջանում: Ձեռնարկ տարրական դպրոցի ուսուցիչների համար, ԱՅՌԵՔՍ, Երևան, 2004:
6. Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման փոխգործուն մեթոդներ, ՀՀԳ ազգային ակադեմիա, Շիրակի հայագիտական կենտրոն, Գիտական աշխատություններ, VII, Գյումրի, 2004:
7. Գալստյան Ա.,Խարազյան Ռ., Ավագյան Լ., Բալայան Ա., Ինքնուրույն ընթերցանության նյութեր, 4-րդ դասարան,«Էդիթ Պրինտ» հրատարակչություն, Երևան, 2012:
8. Գալստյան Ա., Խարազյան Ռ., Բալայան Ա., Մայրենի լեզվի հարցարաններ, կրտսեր դպրոցականների համար, «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, Երևան, 2010:
9. Գալստյան Ա., և այլք, Տարրական դպրոցը մայրենի լեզվի դարբնոց, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, 2011, 350 էջ:
10. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, «Զանգակ-97» հրատարակչություն, 2009, 328 էջ:
11. Գյուլամիրյան Ջ., Խոսքի զարգացում, Երևան, «Զանգակ», 2014, 288 էջ:
12. Գյուլբուդաղյան Ս., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Ե., 1987, 335 էջ:
13. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի- 3, Մեթոդական ուղեցույց, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, 2008, 71 էջ:
14. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի -4 Մեթոդական ուղեցույց, Երևան՝ «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, 2009, 111 էջ:
15. Զաքարյան Ն., Ավետիսյան Յու., Միրումյան Ե., Հայոց լեզու, ձևական և
16. գործնական դասընթաց, Ե., «Զանգակ» հրատարակչություն, 2012, 278 էջ :

17. Խարազյան Ռ., Աշակերտների բառապաշարի հարստացումը տարրական դասարաններում, Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2003, 128 էջ:
18. Խաչատրյան Ս., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Գյումրի, 2008, 61 էջ:
19. Հայոց լեզու և գրականություն, Հանրակրթական դպրոցի առարկայականչափորոշիչ և ծրագրեր, Երևան, Անտարես, 2006, 81 էջ:
20. Ղարիբյան Ա., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Ե., 1954, 27 էջ:
21. Մարտիրոսյան Ա., Հայերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման խնդիրները, Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ, միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., ԵՊՀ հրատ., 2013, 252 էջ:
22. Շահբազյան Տ., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Ե., 1958, 367 էջ:
23. Սարգսյան Վ ., Գրիգորյան Ս., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Մայրենի -2,
24. Մակմիլան- Արմենիա, Երևան, 2007, 15 էջ:
25. Սարուխանյան Ս. և ուրիշներ, Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ Լոռու մասնաճյուղ,Վարաձոր, 2008, 101 էջ:
26. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008, 70 էջ:
27. Թորոսյան Կ., Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Մայրենի 2-4 ՈՒսուցչի ձեռնարկ, Երևան, Մանմար, 2013, 136 էջ:
28. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Գրիգորյան Ս., Խաչատրյան Հ., Մայրենի -2, Երևան,«Մակմիլան-Արմենիա», 2008, 160 էջ:
29. Թորոսյան Կ., Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Չիբուխչյան Կ., Մայրենի - 4 Երևան, Մանմար, 2010, 176 էջ:
30. Տեր - Գրիգորյան Ա., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1980, 564 էջ:
31. Վարդումյան Ս., Հարությունյան Լ., Ջացինյան Ն., Վարելլա Գ., Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ, գնահատում, Ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար,ԱՅՌԵՔՍ, Երևան 2003:
32. Քննադատական մտածողության զարգացումը կրտսեր դպրոցում, Ծրագրեր և նյութեր, Երևան, 2002: